

**ՆՈՐԱՍՈՒԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԴԵՐՐ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Գազիկ Սերգեյի Ասլանյան

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Գայանե Հրաչիկի Գրիգորյան

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Զենֆիրա Արամայիսի Թումասյան

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Ժամանակակից աշխարհում հասարակության և տնտեսության զարգացման կարևոր գործոններից է գիտական և գիտատեխնիկական, այդ թվում նաև ինովացիոն գործունեությունը: Գիտատեխնիկական առաջընթացը հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ոլորտներից մեկն է: Այն գիտական գիտելիքի նյութականացումն է, արտադրողական ուժերի, տարրերի վերածումը և արտադրության մեջ դրանց ներառումն ու արդյունավետ օգտագործումը: Գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է արտադրության համակարգում մարդու վիճակի փոփոխության, նրան նոր՝ ավելի բարձր պահանջներ է ներկայացնում: Աշխատող մարդը դադարում է անմիջականորեն մասնակցել արտադրության պրոցեսին, կատարում է հսկիչի և կարգավորողի ֆունկցիա կամ տեղափոխվում է կառավարման ու սպասարկման ոլորտ: Գիտելիքն այն ներուժն է, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում լուծելու մրցունակ տնտեսության կայացման խնդիրը: Գիտատար արտադրությունը տնտեսության փաստացի և արագընթաց զարգացող հատվածն է, որը մեծապես ազդում է նրա մյուս ճյուղերի վրա: Գիտության նվաճումների վրա հիմնված ինովացիոն տեխնոլոգիաների բուռն զարգացումն ու դրանց զանգվածային ներդրումը տնտեսության մեջ ոչ միայն լուրջ մարտահրավեր է տնտեսական քաղաքականությանը, այլև հարուցում է զգալի տեսական հիմնախնդիրներ: Գիտական գրականության մեջ «ինովացիա» հասկացությունը տարբեր կերպ է մեկնաբանվում: «Ինովացիան» կամ «նորամուծություն» հասկացությունը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարի առաջին 10-ամյակում՝ ավստրիացի հայտնի տնտեսագետ Ջ. Շումպետերի կողմից՝ իր «Տնտեսական զարգացման տեսության» աշխատության մեջ /1911թ./ հեղինակն առաջին անգամ քննարկեց ինովացիայի և ինովացիոն գործունեության հետ

առնչվող խնդիրները՝ ամփոփ ձևով ներկայացնելով դրանց բովանդակությունը¹: Մինչ այդ ինովացիա հասկացության շատ նեղ մեկնաբանություն գոյություն ուներ և ինովացիա ասելով հասկացվում էր մշակույթի որոշ տարրերի փոխանցում կամ ներթափանցում մեկ այլ մշակույթի մեջ: Շումպետերն առաջարկեց ինովացիայի նոր սահմանում, որի համաձայն ինովացիան ներկայացվում էր որպես արտադրական ռեսուրսների օգտագործման նոր կոմբինացիաների միջոցով սպառողական ապրանքների նոր տեսակների արտադրության, տրանսպորտի նոր միջոցների, նոր շուկաների, ինչպես նաև արտադրության կազմակերպման առաջավոր ձևերի ստեղծման և կիրառության նպատակով իրականացվող փոփոխություն: Ինովացիաները կարևոր դերակատարություն են ունեցել հասարակության զարգացման ողջ ընթացքում, ուստի պատահական չէ, որ տարբեր ժամանակաշրջանի գիտնականներն ու հետազոտողները մշտապես անրադարձել են այս հարցին: Ընդ որում նրանցից յուրաքանչյուրը յուրովի է մոտեցել ինովացիայի և ինովացիոն գործունեության էության բացահայտմանը՝ կատարելով որոշակի շեշտադրումներ: Գիտնականների մի խումբ ինովացիան սահմանում են որպես այնպիսի տեխնիկատնտեսական գործընթաց, որը հնարավորություն է ընձեռում հայտնագործությունների և գաղափարների գործնական կիրառության ճանապարհով ստեղծել լավագույն հատկանիշներ ունեցող արտադրանքներ և տեխնոլոգիաներ: Հեղինակների մեկ այլ խումբ ինովացիան սահմանում է որպես այնպիսի գործընթաց, որի ընթացքում հայտնագործությունը կամ նոր գաղափարը ձեռք է բերում տնտեսական բովանդակություն: Եվ վերջապես հեղինակների երրորդ խումբը նշում է, որ ինովացիան տեխնիկական, արտադրական և առևտրային միջոցառումների ամբողջություն է, որոնց արդյունքում շուկայում հայտնվում են նոր կամ բարելավված սպառողական ապրանքներ կամ սարքավորումներ: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ վերոհիշյալ 3 սահմանումներում էլ ինովացիան ներկայացվում է որպես գործընթաց: Մինչդեռ ներկայումս առավել ընդունելի են այն տեսակետները, որոնց համաձայն՝ ինովացիան ներկայացվում է որպես ինովացիոն գործունեության արդյունքում ստեղծված նոր առավել կատարելագործված սպառողական արժեք, որը բավարարում է հասարակության որոշ պահանջմունքներ և ապահովում է մի շարք արդյունքներ, այդ թվում տնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական, էկոլոգիական և այլն: Ներկայումս մեր երկրում պաշտոնապես ընդունվում են ինովացիայի և ինովացիոն գործունեության հետևյալ սահմանումները: Ըստ «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ինովացիան տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական, նոր կամ

¹ Шумпетер Й. Теория экономического развития, М.: Прогресс, 1982.

կատարելագործված արտադրանքի կամ ծառայության տեսքով իրացում գտած վերջնական արդյունք է¹: Ըստ «Գիտական, գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի առաջին հոդվածի համաձայն ինովացիոն գործունեությունը սահմանվում է որպես գիտական արդյունքների օգտագործմանը, նոր արդյունքների ստացմանը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանն ուղղված գործունեություն²: Ինովացիաների ստեղծման սկզբնապատճառների վերաբերյալ փիլիսոփաները մի քանի պատասխաններն են տալիս: Սկզբնապես ինովացիաները մարդկային գիտակցության մեջ ձևավորվում են որպես հիմնահարցեր՝ պայմանավորված իրականության և հնարավոր վիճակի միջև եղած տարբերություններով: Վերջինս ենթադրում է տնտեսվարող սուբյեկտների նպատակաուղղված ինովացիոն գործունեություն, որի արդյունքում նպատակ է դրվում լուծել այդ հակասությունը: Բնականաբար հակասության վերացման համար պարտադիր պայման է հանդիսանում ինովացիոն գործունեության հաջող ելքը, հակառակ պարագայում հակասությունը կարող է ընդամենը մեղմանալ կամ նույնիսկ ամբողջությամբ պահպանվել: Տնտեսագիտական տեսանկյունից ինովացիոն գործունեության բովանդակությունը տնտեսական ոլորտում համարվում է նյութական արտադրության մեջ նորույթի ստեղծումը և տարածումը: Ինովացիան միջանկյալ օղակ է գիտության կամ արտադրական օղակների միջև և իրենից ներկայացնում է յուրահատուկ արտադրական ուժ, որը գիտական արտադրանքի օգտագործման միջոցով իրականացնում է գիտական և նյութական արտադրության համատեղում /ինտեգրացիա/, ապահովում է տնտեսավարող սուբյեկտների տեխնիկա-տնտեսական պահանջմունքների բավարարում: Այսինքն ինովացիաները հանդես են գալիս որպես տնտեսվարող սուբյեկտներ՝ արտադրական և առևտրային խնդիրների լուծման, հետևաբար նաև լրացուցիչ տնտեսական արդյունքների ստացման, գործուն միջոցներ: Ընդ որում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենից հաճախ ինովացիոն գործունեությունից տնտեսական արդյունք ստանում է այն տնտեսվարող սուբյեկտը, որը կիրառում է ինովացիա, այլ ոչ թե նա, ով ստեղծում է այդ ինովացիան, ուստի ինովացիոն գործունեության փոխհարաբերությունների համակարգում անհրաժեշտ է տարբերել հետևյալ երկու հասկացությունները՝ ինովատոր և իմիտատոր: Սրանցից առաջինը՝ ինովացիան օգտագործում է առաջին անգամ, ընդ որում այն նորույթ է հանդիսանում ոչ միայն իր այլ ողջ հասարակության համար (բացարձակ ինովացիա), իսկ այն անձը, որն օգտագործում է արդեն գոյություն ունեցող ինովացիան, որը սակայն նորույթ է միայն իր համար, այլ ոչ թե ողջ հասարակության համար (հարաբերական

¹ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 23.05.2006թ.:

² «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2000թ.:

ինովացիա), կոչվում է իմիտատոր: Ինովացիայի մասին ամփոփ պատկերացում կազմելու համար անդրադառնանք ինովացիաների դասակարգմանը: Տնտեսագիտական գրականության մեջ ինովացիաները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների: Ինովացիաների տեսության հիմնադիր Շումպետերը՝ ինովացիաները բաժանել է հիմնականի և երկրորդականի, իսկ գերմանացի գիտնական Մենշը առանձնացրել է բազային (հիմնարար), բարելավող և կեղծ ինովացիաների տեսակների: Բազային ինովացիաներն իրականացվում են խոշոր հայտնագործությունների և նոր գիտական սկզբունքների հիման վրա: Դրանք իրենց հերթին լինում են տեխնոլոգիական և ոչ տեխնոլոգիական: Տեխնոլոգիական ինովացիաների միջոցով ի հայտ են գալիս նոր ոլորտներ, շուկաներ, իսկ ոչ տեխնոլոգիականների միջոցով փոփոխություններ են կատարվում հանրային ծառայությունների, մշակույթի տարբեր ոլորտներում: Բարելավող ինովացիաները ուղղված են սպառողական ապրանքների, արտադրության միջոցների, տեխնոլոգիաների բարելավմանը, որակական հատկանիշների բարձրացմանը: Կեղծ ինովացիաները ուղղված են սպառողական ապրանքների, արտադրության միջոցների և այլնի միայն արտաքին փոփոխությանը, սակայն որը չի հանգեցնում սպառողական բնութագրիչների բարելավմանը: Հետագայում ինովացիաների դասակարգումը համալրվեց համակարգային ինովացիաներ հասկացությամբ, վերջիններիս իրականացման հիմքում ընկած են հիմնարար ինովացիաների առանձին բաղկացուցիչ մասերի նոր հասկացություններ: Համակարգային իրերը կոչված են սկզբունքորեն նոր գործողություններ իրականացնելու: Ինովացիաների դասակարգումը՝ հնարավորություն է տալիս պարզաբանել և լուծել այնպիսի հիմնահարցեր՝ ինչպիսիք են.

- ինովացիաների տարբեր տեսակների փոխկապվածությունը իրականացվող նորամուծական ռազմավարության հետ,
- ինովացիաների տարբեր տեսակների միջոցով կառավարման տնտեսական մեխանիզմների և ձևերի ընտրությունը,
- տարբեր շուկաներում ինովացիաների իրացման ձևերի ընտրությունը: Ինովացիաները կարելի է դասակարգել նաև հետևյալ կերպ՝
- գիտատեխնիկական ինովացիաներ. նպատակը նոր արտադրանք կամ ծառայություն ստեղծելն է, կատարելագործելն ըստ տեխնոլոգիական բովանդակության,
- կառավարման ինովացիաներ՝ ուղղված են արտադրության կառավարման և արդյունքի փոխանակման գործընթացի կատարելագործմանը,
- սոցիալ-տնտեսական ինովացիաներ՝ փոխում են կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները:

Ըստ կազմակերպության գործունեության ոլորտի՝ ինովացիաները լինում

են՝ արտադրական, առևտրային, ֆինանսական և այլն: Ըստ Սելիչկինի առանձնացվում են ինովացիաների 3 խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են գիտական տիտելիքները տարբեր մակարդակներով և նյութականացման աստիճանով՝

1. Խմբի ինովացիաները ստեղծվում են սկզբունքորեն նոր գիտական գաղափարների և հեղափոխական արտադրողական ուժերի հիմքի վրա, այս խմբի ինովացիաները որպես կանոն, հայրենական և միջազգային շուկաներում ունեն իրենց նմանակները, դրանք ունեն արտոնագրային և լիցենզիոն մաքրության բարձր աստիճան, բնօրինակ փորձանմուշներ են, որոնց հիման վրա հետագայում պետք է ստեղծվեն կրկնօրինակներ:

2. Խմբի ինովացիաները ստեղծում են տեխնիկայի փոփոխություն, նոր տեխնոլոգիաների ծագման հիմքի վրա՝ պահպանելով հիմնարար գիտական սկզբունքները:

3. Խմբի ինովացիաներն իրականացվում են տեխնիկայի տվյալ սերնդին պարամետրերի քանակական բարելավման հիման վրա:

Ինչպես տեսնում ենք ինովացիաների դասակարգման վերոհիշյալ մոտեցման մեջ առանձնակի կարևոր է այն հանգամանքը, թե ինչպիսի գիտական գիտելիքների նյութականացման արդյունք են այդ ինովացիաները: Ինովացիաների դասակարգման բավական ինքնատիպ տարբերակ են առաջարկել գերմանացի տնտեսագետներ Կուսբսը և Կլյայնկենիստը, այն հնարավորություն է ընձեռում հատուկ սահմանազատել ինովացիա-արտադրանքը ինովացիա-գործընթացից: Ըստ նրանց՝ ինովացիաները լինում են՝

- ինովացիա-ապրանքներ՝ նախատեսված վերջնական սպառման համար,
- ներդրումային ինովացիա-արտադրանքներ և ինովացիա-գործընթացներ՝ նախատեսված սպառողական արտադրանքերի արտադրության կամ ծառայությունների մատուցման համար:

Ռուս հեղինակները ինովացիաների դասակարգման հիմքում դնում են 2 հատկանիշ՝ կառուցվածքային բնութագիրը և նպատակային փոփոխությունները¹: Ըստ կառուցվածքային բնութագրի՝ ինովացիաները բաժանվում են՝

- ինովացիաներ ձեռնարկություն մտնելիս (հումքի, նյութերի, սարքավորումների, տեղեկատվության, աշխատողների և այլ ռեսուրսների) ընտրության և օգտագործման նպատակային որակական կամ քանակական փոփոխություններ,
- ինովացիաներ ձեռնարկության էլքի մոտ (արտադրական, սպասարկող,

¹ Кондратьев Н.Д. Проблемы экономической динамики, М.: Экономика, 1984, с. 210.

օժանդակող կապերի) նպատակային որակական, քանակական, կազմակերպական և ապահովման եղանակների փոփոխություն,

- ձեռնարկության կառուցվածքի ինովացիաներ (որպես համակարգի առանձին տարրերի և դրանց փոխադարձ կապերի նպատակային փոփոխություն):

Ըստ նպատակային փոփոխությունների՝ ինովացիաները բաժանվում են՝

- տեխնոլոգիական՝ նոր արտադրանքի, տեխնոլոգիայի, նյութերի ստեղծում, սարքավորումների արդիականացում, արտադրական շենքերի վերակառուցում, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների իրականացում,
- արտադրական կարողությունների հզորացում՝ արտադրական գործունեության ընդլայնում, հզորությունների հարաբերակցության փոփոխություն,
- արտադրատնտեսական գործունեության բոլոր ձևերի ծրագրավորման մեթոդների փոփոխություն, արտադրական ծախսերի իջեցում, վերջնական արդյունքի բարելավում, աշխատողների տնտեսական խթանման, նյութական շահագրգռման աճ, ներարտադրական ծախսերի հաշվարկման համակարգի ռացիոնալացում,
- առևտրային՝ գնային քաղաքականության մեթոդների օգտագործումը մատակարարների և պատվիրատուների հետ հարաբերություններում այս ապրանքների և ծառայությունների առաջարկվող վարկերի, պարտքերի ձևով ֆինանսական ռեսուրսների տրամադրում, շահույթի և կուտակված ռեսուրսների բաշխման նոր մեթոդների կիրառում և այլն,
- սոցիալական՝ աշխատանքի սոցիալական ապահովությանը տրամադրվող ծառայությունների, ձեռնարկություններում հոգեբանական մթնոլորտի և փոխհարաբերության պայմանների և բնույթի բարելավում,
- ինովացիաներ կառավարման ոլորտում՝ կազմակերպական կառուցվածքի, որոշումների ընդունման ոճի և մեթոդների բարելավում, տեղեկատվության և փաստաթղթային շրջանառության մշակման նոր միջոցների կիրառում գրասենյակային աշխատանքի ռացիոնալացում և այլն:

Լիովին այլ հատկանիշներ են դրված հետևյալ դասակարգման մեջ. ըստ առաջացման պատճառի՝

- ռեակտիվ (արձագանքելու հատկությամբ) ինովացիաներ՝ ապահովում են ֆիրմայի գոյատևումը. որպես արձագանք՝ մրցակցի կողմից իրականացվող նոր վերափոխումներ, փոխարկումներ որպեսզի կարողանան պայքարել շուկայում,
- ռազմավարական ինովացիաներ, որոնց ներդրումը կրում է կանխող բնույթ,

հեռանկարում որոշիչ մրցակցային առավելություններ ստանալու նպատակով:

Ըստ կիրառման առարկայի և ոլորտի՝

- ապրանքային՝ նոր ապրանքներ և ծառայություններ,
- շուկայական՝ նոր ոլորտների բացահայտում և նոր շուկաների որոնում,
- ինովացիոն գործընթացներ՝ տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպում, կառավարչական գործընթացներ և այլն:

Ըստ բավարարվող պահանջմունքների բնույթի՝

- կողմնորոշում դեպի գոյություն ունեցող պահանջմունքները՝ այսօր գոյություն ունեցող պահանջմունքներ, որոնք բավարարված չեն կամ բավարարված են մասնակի,
- կողմնորոշում դեպի նոր պահանջմունքների ձևավորում՝ հեռանկարային պահանջմունքներ, որոնք կարող են ի հայտ գալ մարդկանց ճաշակը, նախասիրությունները փոփոխող գործոնների ազդեցությամբ:

Ըստ Բալաբանովի գիտականորեն հիմնավորված դասակարգումը պետք է պատասխան տա հետևյալ երեք հարցերին՝

1. որն է ինովացիայի նպատակը
2. որն է ինովացիայի իրականացման ձևը
3. որն է ինովացիայի կիրառման ոլորտը:

Այս երեքը՝ նպատակ, ձև, կիրառման ոլորտ՝ կազմում են դասակարգման հատկանիշների համակարգը, վերջինս ներառում է նաև նպատակային, արտաքին և կառուցվածքային հատկանիշները: Նպատակային հատկանիշը պատասխանում է այն հարցին, թե որն է ինովացիայի նպատակը անհետաձգելի հասույթի (ընթացիկ), թե ապագայի (ռազմավարական) խնդրի լուծումը: Այս երկու նպատակները որոշվում են տվյալ նորամուծության առաջացման պատճառի նկատմամբ պահանջմունքով: Դասակարգման նպատակային հատկանիշի համաձայն ինովացիաները լինում են ճգնաժամային և զարգացման, ըստ արտաքին հատկանիշի, ինովացիաները լինում են՝ ապրանք և գործընթաց: Դասակարգային հատկանիշը ցույց է տալիս, թե ազգային տնտեսության համալիրի որ ճյուղի կամ տնտեսական հարաբերությունների որ ոլորտի համար է նախատեսված տվյալ ինովացիան: Ինովացիաների տեսակները ներառում են ինովացիաների տարբեր ձևեր՝ ինովացիայի ձևը ինովացիայի խումբ է միավորված գոյատևման միասնական եղանակով, դա նոր տեխնիկան է, նոր ապրանքը, արտադրանքը, արտադրության նոր տեխնոլոգիան և այլն:

Ինովացիաներն իրականացնում են երեք գործառույթ՝

1. վերարտադրական
2. ներդրումային
3. խթանող:

Ըստ 1-ին գործառույթի ինովացիաներն իրենցից ներկայացնում են ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման աղբյուր. ինովացիայի վաճառքից ստացված դրամական հասույթը ստեղծում է ձեռնարկատիրական շահույթ, ինչը դառնում է ֆինանսական ռեսուրսների աղբյուր, միևնույն ժամանակ նորամուծական գործունեության արդյունավետության չափանիշ: Ինովացիաների դասակարգումը հնարավորություն է տալիս պարզել ինովացիոն քաղաքականության իրականացման տարբեր ուղղությունները, մեխանիզմները և ձևերը: Ինչպես տնտեսության բոլոր ոլորտներում, այնպես էլ ինովացիոն ոլորտում ենթակառուցվածքները իրենց մեջ ամբողջացնում են այն միջավայրը, որտեղ սկսվում և ընթանում է ինովացիոն գործընթացը: Ինովացիոն ենթակառուցվածքները կարելի է դիտարկել նեղ և լայն տեսանկյուններից, կամ միկրո և մակրո մակարդակներում: Միկրոմակարդակում ինովացիոն ենթակառուցվածքի տարրերն են ինովացիոն գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտի գիտական ներուժը, գիտափորձարարական բազան, գիտատեղեկատվական տեղեկատվությունը, գիտաարտադրական կադրերը և այլն: Լայն կամ մակրոմակարդակում ինովացիոն ենթակառուցվածքներ ասելով հասկանում ենք տնտեսության այն ոլորտների ամբողջությունը, որոնք այս կամ այն կերպ նպաստում են գիտելիքի ներթափանցմանը տնտեսության արտադրական կամ իրական հատված: Գիտական ենթակառուցվածքների առանձին կազմակերպական միավորներ են համարվում տեխնոպարկերը, ինովացիոն կենտրոնները, գիտական պարկերը, տեխնոքաղաքները և այլն, բիզնես ինովացիոն ինկուբատորներ: Ինովացիոն ենթակառուցվածքների ամենատարածված և կազմակերպված ձևերից մեկը գիտական պարկն է, որի հիմնական առանձնահատկությունն այն է, որ սովորաբար ձևավորվում և զարգանում է որևէ խոշոր համալսարանական կենտրոնի շուրջ: Գիտական պարկերի հաջորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ավելի հաճախ ձևավորվում և գործարկվում են տարածաշրջանային և բնակլիմայական առավել նպաստավոր՝ պայմաններում հատուկ աջադրություն դարձնելով նաև կապի, հեռահաղորդակցության, տրանսպորտային, ֆինանսական, խորհրդատվական ենթակառուցվածքների առկայությունը: Նշված ենթակառուցվածքների առկայությունը հանդիսանում է նորամուծական գործունեության իրականացման առանձնահատկություն, և ունի մեծ դեր ժամանակակից տնտեսությունում:

**ՆՈՐԱՍՈՒԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԴԵՐՆ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Գազիկ Սերգեյի Ասլանյան**

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, սոստեսագիտության թեկնածու

Գայանե Հրաչիկի Գրիգորյան

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակրպման ամբիոնի դոցենտ, սոստեսագիտության թեկնածու

Զենֆիրա Արամայիսի Թումասյան

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակրպման ամբիոնի դոցենտ, սոստեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Հոդվածում քննարկված է գիտության նվաճումների վրա հիմնված նորամուծական տեխնոլոգիաների զարգացման և ներդրման առանձնահատկությունները սոստեսությունում: Նորամուծությունները ոչ միայն լուրջ մարտահրավեր են սոստեսական քաղաքականությանը, այլև ժամանակակից պայմաններում առաջ են բերում լուրջ սոստեսական հիմնահարցեր: Հոդվածում տրված է նորամուծությունների դասակարգումը, ըստ տարբեր հատկանիշների, որոնց պարզաբանումը հնարավորություն է տալիս լուծելու մի շարք կարևոր խնդիրներ:

Հիմնաբառեր. ինովացիա, արդյունավետություն, ինովատոր, իմիտատոր, տեխնոլոգիա, ֆիրմա, վերարտադրություն, ենթակառուցվածք, գործունեություն, հասույթ:

**ОСОБЕННОСТИ СОЗДАНИЯ И РОЛЬ ИННОВАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В
СОВРЕМЕННОЙ ЭКОНОМИКЕ**

Гагик Сергеевич Асланян

Доцент АГЭУ, кандидат экономических наук

Гаяне Грачиговна Григорян

Доцент кафедры “Микроэкономики и организации производственной деятельности” АГЭУ, кандидат экономических наук

Зенфира Арамаисовна Тумасян

Доцент кафедры “Микроэкономики и организации производственной деятельности” АГЭУ, кандидат экономических наук

Аннотация

В статье обсуждены особенности развития и внедрения инновационных

технологий, основанных на научных достижениях. Инновации является не только серьезным вызовом экологической полсебке, но выдвигают и серьезные экономические задачи в современных условиях. В статье представлена классификация иновации по различным особенностям, разьясления которых дает возможность решить ряд важнейших задач.

Ключевые слова: инновация, продуктивность, инноватор, имитатор, технология, фирма, воспроизводство, инфраструктура, деятельность, прибыль.

THE CREATION AND THE ROLE OF CHARACTERISTIC TEATURES OF INNOVATIVE TECHNOLOGIES IN MODERN ECONOMY.

Gagik Sergey Aslanyan

Assosiate Professor in ASUE, Candidate of Economics

Gayane Hrachik Grigoryan

Assosiate Professor in ASUE, the Chair of Microeconomics and Entrepreneurship Management, Candidate of Economics

Zenfira Aramayis Tumasyan

Assosiate Professor in ASUE, the Chair of Microeconomics and Entrepreneurship Management, Candidate of Economics

Abstract

In the given article new Innovative technologies that are science based achievements are discussed and also the investment characteristics. Innovations are not only a hind of challenge for economic policy, but also bring very important issues under the modern conditions. The classification of innovations are described in the article, according to their defferent features, the illustration of which helps to solve a series of important problems.

Keywords: Innovation, innovator, imitator, technology, firm, reproduction, infrastructure, profit.